ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 մայիսի 2020 թ.
№ 5 (1055)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆ

Հայրենական մեծ պատերազմի վետերանների շարքերը գնալով նոսրանում են, ցավոք, այն չի շրջանցել նաև մեր համալսարանը. Լևոն Կոջոյան, Ցոլակ Սիմոնյան, Ռոզա Փաշինյան և շատ ուրիշներ… Մայիսի 9-ին Խորհրդային Միության կազմում հայ քաջորդիները պայքարեցին թշնամու դեմ՝ մոտեցնելով բաղձալի հաղթանակը:

ՀՀ վաստակավոր նկարիչ, Հայրենական մեծ պատերազմի վետերան Հակոբ Կոջոյանը որքան ցավով էր խոսում անցած պատերազմի, այնքան էլ՝ գուրգուրանքով ապագայի մասին. «Մենք պաշտպանում էինք մեր մեծ երկիրը, մեր հայրենիքը, մեր խաղաղությունը, մեր գարունն ու մեր ապագան: …Մեր հողագունդը ոչ թե պատերազմելու, այլ ապրելու, վայելելու և գեղեցկությունն զգալու համար է»:

Մեծ է հայ ժողովրդի ավանդը Հայրենական պատերազմում տարած հաղթանակում, հաղթանակ, որ ձեռք բերվեց ոգու ամրության, նաև մեծ կորուստների ու արյան գնով:

Պատերազմում տարած հաղթանակի 75 տարիների հեռավորությունն անգամ չի խամրեցնում հայ քաջորդիների սխրանքը. Հայրենական պատերազմի տարբեր ռազմաճակատներում կռվել ու հաղթանակում իրենց ավանդն են ունեցել 600 հազար հայորդիներ: Հայ ազգը տվել է 4 մարշալ՝ Բաղրամյան, Բաբաջանյան, Խուդյակով (Խամփերյանց), Աղանով, ԽՍՀՄ մեկ ծովակալ՝ Իսակով: Մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրվել են 70 հազար հայ մարտիկներ, փառքի շքանշանակիր է դարձել 27 շարքային զինվոր, 104 մարդ արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Նելսոն Ստեփանյանն արժանացել է Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչմանը: Իսկապես փոքր ազգի մեծ հերոսներ…

Մայիսը հայ ժողովրդի համար հաղթանակների ամիս է, քանզի մեր ժողովրդի անպարտելի սրի և անկոտրում կամքի շնորհիվ հայոց պատմությունը պսակվել է Մայիսյան հաղթանակների փառքով:

Շուշիի ազատագրումը Արցախյան հերոսամարտի ամենամեծ ձեռքբերումներից է, Հայոց պաշտպանության բանակի ստեղծումը՝ այն հիմնաքարը, առանց որի անհնար էր որևէ հաղթություն:

Հավերժ հիշատակ հայրենյաց համար ընկած բոլոր նահատակներին, հավերժ փառք Մայիսյան եռատոնը կերտած հայ քաջորդիներին:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՓԱՌՔԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ

Նահանջի ճամփան էր մեր ոտքի տակ ընկել,
Վտանգված էր հողը մեր գեղեցիկ…
Մենք միասին էինք այդ վայրկյանին, ընկե՛ր,
Մենք միասին, մեկտեղ նահանջեցինք:

Հողը կառչում էր մեզ իր գորշ կպչուն կավով,
Խրամատն էր կտրում դարձի ուղին:
Բայց մենք զինվոր էինք, և իր հրամանով
Հաղթանակն էր սաստում՝ զատվե՛լ հողից:

…Նայում էին հեռվից, ովքեր ծնել էին,
Ովքեր սնել էին և մեզ սիրել կյանքում…
Շուրջը՝ սառնամանիք, շուրջը ձյուներ էին,
Մերթ՝ անարատ, ճերմակ, մերթ՝ արնագույն:

Ու մենք քայլում էինք, ու մենք սողում էինք:
Ոչի՛նչ, սողում էինք, որ չսողա՛նք կյանքում:
Մեր հողն էր մեզ կրում, մենք մեր հողում էինք:

Ահա ինչու՝ նրանք ցրտից դողում էին,
Իսկ մենք այրվո՛ւմ էինք, մենք ողողվո՛ւմ էինք
Մեր քրտինքով ցասման…
Ինչպես ես՝ իմ Զանգուն,
Անցանք քեզ հետ մեկտեղ քո Դոնը և Վոլգան:
Խաղաղությունն էր դեռ մեր ականջին զնգում.
Դեռ մուրճն էր քո ձեռքին, գրիչն էր իմ ձեռքում-
Դեռ մենք կիսո՛վ էինք զինվորական:

Դու այդպես էլ ընկար - կիսով՝ արդեն մարտիկ,
Կիսով չափ դեռ դարբին կոլխոզային,
Միտքդ՝ թողած մուրճիդ, ձեռքդ՝ ավտոմատիդ
Եվ ականջդ՝ մոտիկ հաղթանակի ձայնին:

Իսկ ես դեռ ապրեցի: Թողած թուղթ ու մատիտ,
Հեծած պատերազմի աստծուն պողպատ թամբով,
Մտքով նորի՛ց քեզ հետ, միշտ քո կողքի՛ն մոտիկ,
Առա՛ջ արշավեցի մեր նահանջի ճամփով:

Մենք միասին անցանք այն ճանապարհն ամբողջ,
Ուր մենք ապրել էինք ցավ ու վտանգ:
Շուրջը այնժամ գարո՛ւն, վառ կանա՛չ էր, բողբո՛ջ,
Արև՛ն էր հաղթության, արյան ցո՛ղն էր քո թանկ…

Ու մենք Բեռլին մտանք…
Ու ես իմ տուն դարձա,
Արդարությունը երբ հաղթանակեց կյանքում:
Իսկ դու արձանացար,
Դու հուշարձան դարձար
Մայր Վոլգայի ափին, տափաստանում անծայր,
Բուդապեշտո՛ւմ:
Լոծո՛ւմ,
մարդկանց հոգո՛ւմ:

…Խաղաղությունն է արդ մեր ականջին զնգում
Իբրև մանգաղ՝ արտից, իբրև մանուկ՝ տնից:
Եվ մենք նորից կիսով մեզ զինվոր ենք զգում.
Խաղաղությունն ենք մենք օր ու գիշեր հսկում,
Ես՝ իմ երգերի մեջ, դու՝ քո պատվանդանից…

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԼԱՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Շատերն են դեռ մանկուց երազում ուսուցիչ դառնալ, ընտրել աշխարհի ամենալավ մասնագիտությունը, որը միաժամանակ կոչում է և առաքելություն:

Իրականությո՛ւն դարձրեք ձեր երազանքը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում. 10 ֆակուլտետ և 41 մասնագիտություն, որոնցից յուրաքանչյուրը հետաքրքիր է ու յուրահատուկ: Ընտրեք ձեր նախասիրություններին համահունչ այն մասնագիտությունը, որը կտանի Ուսուցչի վեհ կոչմանն արժանանալու նվիրական ճանապարհով: Զարգացման ու առաջընթացի ուղին ընտրած այս համալսարանում դուք ոչ միայն ձեռք կբերեք գիտելիքներ, այլև հնարավորություն՝ սովորելու աշխարհի լավագույն համալսարաններում, մասնակցելու «Լավագույն ուսանող» և բազմաթիվ այլ մրցույթների, որոնք քայլ առ քայլ կմոտեցնեն ձեր երազանքների իրականացմանը…

ԻՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ

Մի ուղենիշի պատմություն

Կան ուղենիշներ, որոնք մեզ դեպի շատ կարճ ճանապարհներ են առաջնորդում, կան ուղենիշներ, որոնք աղբյուրի նման են, նստում, հանգստանում ես, հետո՝ ճամփադ շարունակում, և կան այնպիսի ուղենիշներ, որոնք չես էլ գիտակցում, թե ինչպես են քեզ ուղեկցում քո ամբողջ կյանքում:

Ես ծնվել եմ մանկավարժների ընտանիքում: Իմ մանկությունից շատ խաղեր չեմ հիշում, թերևս միայն «դպրոց-դպրոց»-ը: Դե, ուրիշ ի՞նչ խաղ ինձ կգրավեր, երբ տանը չորս մանկավարժ կար: Ոչ մեկի համար անակնկալ չէր, որ 2007 թվականին, երբ ընդունելության հայտ էի լրացնում, նշեցի Մանկավարժական համալսարանը: Նշեցի ու ընդունվեցի:

Այն ժամանակ մեր ֆակուլտետը կոչվում էր Գեղարվեստի: Ես հույս ունեի ու չէի սխալվել, որ այստեղ ինձ շատ բան կպատմեն իմ մյուս հայրենիքի՝ Հունաստանի մշակույթի մասին, որի լեգենդներն ու առասպելները մանկուց իմ ամենասիրելի թեմաներն էին, որոնց նկարազարդումները ձևակերպել էին իմ գեղարվեստական ճաշակը, ապագա մշակութաբանի վերլուծող աչքը.

Ես բազմիցս եղել եմ հունական թանգարաններում, ես տեսել եմ տասնյակ արխայիկ կորաներ, բայց ամեն անգամ, երբ իմ ուսանողներին ուզում եմ նկարագրել, ցույց տալ, թե ինչ տեսք ունեին կորաները, աչքերիս առաջ պատկերվում է տիկին Գամաղելյանը, ով մեր առջև կանգնում էր ծիգ դիրքով, գլուխը ետ գցած, արմունկները ծալած և արխայիկ ժպիտը դեմքին:

Ես հիշում եմ, թե որքան էր սրվել ու հղկվել մեր վերլուծական միտքը պարոն Աղաջանյանի՝ մշակույթի տեսության դասերի ժամանակ, որ երբեմն նա դիտմամբ տրամաբանորեն սխալ նախադասություն էր ասում, որ ստուգի՝ արդյոք նկատո՞ւմ ենք տեսական սխալները: Եվ մենք նկատում էինք, ցած էինք դնում գրիչներն ու ասում՝ «Չենք գրելու, պարո՛ն Աղաջանյան, էս ի՞նչ եք մեզ ասում»:

Վերջերս գտել էի իմ դասախոսությունների տետրերի արկղը: Ինտերնետի այս դարում, ուր ուզածդ գիրքն ու տեսանյութը հասանելի են որոնման տեղում գրելուց մեկ վայրկյան հետո, երբ տանը նստած կարող ես գտնվել ուզածդ թանգարանում, ես մասունքի պես բացել, վերընթերցում էի Վարդիթեր Գամաղելյանի, Մարինա Հակոբյանի, Հրավարդ Հակոբյանի, Սերգեյ Աղաջանյանի և ուրիշների դասախոսություններից արած գրառումներս: Դրանք մտքեր, ձևակերպումներ են, որոնք ուղենիշի պես ինձ առաջնորդել են նույնիսկ այնպիսի իրավիճակներում, երբ գործս «կապված» չի եղել ո՛չ մշակույթի, ո՛չ էլ մանկավարժության հետ, թեև ինչ-որ մի հրաշքով մանկավարժությունն իմ կյանքի բոլոր ոլորտներում գալիս ու ինձ գտնում է:



Իմ՝ պրագմատիկ ու դարի մասնագիտություններ ունեցող ծանոթներն ինձ հաճախ էին հարցնում՝ ի՞նչ կարող ես աշխատել մշակութաբան-մանկավարժի մասնագիտությամբ: Բանավիճել չեմ սիրում, բայց փորձն ու փաստերն արձանագրելուց լավ եմ մանկավարժ լինելը, կոչում, պատիվ լինելուց բացի (այս բաները շատ խելացիներ են ասել, նորություն չեն), մի կարևոր հմտություն է, որի կարիքը կա ցանկացած աշխատանքի մեջ՝ լինես նկարիչ, թե լրագրող, ոստիկան, թե բանաստեղծ:

«Պեդագոգոսը» հունարեն բառ է, որ նշանակում է երեխային ուղղություն ցույց տվող, առաջնորդող: Իսկ այդ երեխան մենք բոլորս ենք՝ մարդկությունը, որ օրինակելի առաջնորդ է փնտրում իր համար, ուղենիշ կամ փարոսգգգ

Մարիա ԼԱՋԱՐԵՎԱ
ՀՊՄՀ շրջանավարտ, Հայաստանի հունական համայնքների միության նախագահ

Հայկական պետական մանկավարժական համալսարան (ASPU)

Սիրելի դիմորդ, ծանոթացիր 2020-2021 ուսումնական տարվա առկա բակալավրիատի ընդունելության սկզբունքներին:

Ընդունելության քննության և մասնագիտությունների նշումով դիմում-հայտը պետք է ուղարկել ԳԹԿ (atc.am) էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ մայիսի 25-ից մինչև հուլիսի 15-ը ժամը 18.00՝ միասնական քննության համար ԳԹԿ հաշվեհամարին փոխանցելով 1500 դրամ:

Դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի՝ մինչև երկու անվճար և մինչև ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին, եթե ընտրած բոլոր մասնագիտությունների համար սահմանված է ընդունելության մրցութային միևնույն առարկայի քննությունը:

Դիմորդին չի թույլատրվում ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ:

Միասնական և ներբուհական քննություններն անցկացվում են մեկ փուլով՝ հուլիս ամսվա առաջին տասնօրյակում:

Անվճար և վճարովի ուսուցման ընդունելության մրցույթներն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ:

Անվճար և վճարովի ուսուցման մրցույթների հիմնական փուլի արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ տարվա հուլիսի 18-ը:

Ներբուհական քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է համապատասխան բուհում: Մրցույթի արդյունքը հաստատվում է հանրապետական ընդունող հանձնաժողովում, որից հետո բուհի ռեկտորը հրամանագրում է ուսանողներին:

Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից ընդունելության քննությունների հիմնական փուլի մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո, բուհերում մասնագիտությունների թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննությունից դրական միավոր ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին:

Թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների նշումով նոր դիմում-հայտը ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով հուլիսի 20-ից մինչև հուլիսի 22-ը, ժամը 18.00:

Դիմորդները ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են թափուր տեղեր ունեցող մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի:

Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում լրացուցիչ փուլի մրցույթի արդյունքները հաստատում է հուլիսի 25-ին:

Ընդունելության վերաբերյալ այլ մանրամասների համար կարող եք զանգահարել 010 59 70 69՝ Մանկավարժական համալսարանի Ընդունող հանձնաժողով:

Հոգեբանության հիմնախնդիրներին նվիրված պարբերականն՝ անգլերեն լեզվով



Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի նախաձեռնությամբ անգլերերեն լեզվով լույս է տեսել «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» ամսագրի առաջին համարը: Գիտական խմբագրակազմի որոշմամբ այն հրատարակվելու է տարին երկու անգամ:

«Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսը միտված է նպաստելու Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մանկավարժահոգեբանական կրթական ոլորտի զարգացմանն ու առաջընթացին: Պարբերականում զետեղված են գիտատեսական և գիտամեթոդական բնույթի հոդվածներ, որոնք օժանդակելու են մանկավարժության և հոգեբանության բնագավառների առջև ծառացած խնդիրների լուծմանը, կրթության կառավարման հիմնախնդիրների լուսաբանմանը, համաշխարհային փորձի ուսումնասիրմանը և միջազգային կրթական գործընթացների առաջադրած դրույթների համակարգված և միասնական ներդրմանը:

Ամսագրի խմբագրակազմում են հոգեբանության, փիլիսոփայության և տնտեսագիտության ոլորտի ճանաչված գիտնականներ ԱՄՆ-ից, Միացյալ Թագավորությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից, այդ թվում՝ տնտեսագիտության դոկտոր Տիգրան Սարգսյանը (խմբագրական խորհրդի նախագահ), ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը (խմբագրական կոլեգիայի նախագահ), ՀՊՄՀ պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սրբուհի Գևորգյանը (գլխավոր խմբագիր), Չիկագոյի Իլինոյսի համալսարանի Կրթական հոգեբանության ֆակուլտետի պրոֆեսոր Արթին Գոնչուն (ԱՄՆ), Հոգեբանության և իրավունքի եվրոպական ասոցիացիայի նախկին նախագահ, Բերգենի համալսարանի պրոֆեսոր Դեյվիդ Ջ. Կուկը (Միացյալ Թագավորության), Դ. Ն. Ուզնաձեի անվան հոգեբանության ինստիտուտի տնօրեն, խմբագրակազմի գլխավոր թղթակից Իրակլի Իմեդաձեն, Հարավային դաշնային համալսարանի Սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ Վերա Լաբունսկայան (ՌԴ), ԱՀՀ ՏԲԴ անձի դրական հոգեբանության և մոտիվացիայի միջազգային լաբորատորիայի ղեկավար, Մոսկվայի պետական համալ-

➤3

Բանասիրական ֆակուլտետը մի ուրույն աշխարհ է



Բանասիրությունն այն եզակի մասնագիտություններից է, որն իր մեջ ամփոփում է անտիկ Հունաստանից մինչև ժամանակակից Եվրոպայի նշանավոր գիտությունները: Լայն ընդգրկումներ ունեցող այս գիտությունը ժպիտով է ողջունում իրեն ընդառաջ եկող յուրաքանչյուր մարդու: Եվ նրանց հնարավորություն է տալիս սուզվել գրքերի օվկիանոսը, փնտրել ու բազմագույն աշխարհից ջրի երես հանել հենց իրենց մարգարիտը: Այդ մարգարիտը փայլն ու արժեքը չկորցնելու հատկություն ունի: Այն քեզ հիշեցնելու է գեղեցիկ օվկիանոսի ու ամենասովորական առվակի տարբերությունը: Բանասիրությունը սովորեցնում է գտնել գեղեցիկը, սովորեցնում է սիրել ու ժպտալ, քայլել թեթև ու սահուն, քայլել անդնդի եզրին ու վախենալու փոխարեն՝ վայելել: Այն փոխում է մարդուն ֆիզիկապես ու հոգեպես, լցնում է հոգու դատարկությունն ու հմայիչ է դարձնում հայացքը, շարժումները: Այս մասնագիտությունը դառնում է ապրելակերպ, այն լցվում է օդի մեջ ու միախառնվելով թթվածնին՝ թարմացնում է շնչառությունը, տալիս է նոր շունչ ու ավյուն:

Այս ամենն է ինձ բերել իմ ֆակուլտետ՝ Բանասիրական ֆակուլտետ: Այստեղ դասախոսներն, իրենց գիտության շնորհներով լցված, ուսանողներին օգնում են քայլել բանասիրության խորհրդավոր աշխարհով: Ֆակուլտետում փոր-ձառու և ժամանակների փոթորիկների միջով անցած դասախոսների կողքին զարգանում են ուսանողները, երիտասարդացնում են ֆակուլտետը, նոր շունչ տալիս նրան՝ պահելով հիմնական կոլորիտը: Ֆակուլտետս, այս առումով, նմանեցնում եմ Երևանիս. Երևանում էլ հին ու կոլորիտային շենքերի կողքին հայտնվում են նորերը, նոր շունչ են տալիս քաղաքին, բայց երբեք չեն փոխում նրա նախկին գրավչությունը:

Բանասիրական ֆակուլտետը մի ուրույն աշխարհ է, որտեղ մուտք գործողը դուրս է գալիս յուրահատուկ գիտելիքներով իմաստնացած:

Անահիտ ՔՈՉԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս

Ո՛չ բանակի հզորությունը, ո՛չ զենքի որակը, այլ ոգու ուժն է ապահովում հաղթանակը:

ՖԻԽՏԵ

Մենք հաղթանակի սերունդն ենք

Մայիսի 7-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Եղյանի առաջարկով և Կուլտուրայի ֆակուլտետի ուսանողների աջակցությամբ տեղի ունեցավ մայիսյան եռատոնին նվիրված օնլայն եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) կոնֆերանս-քննարկում: ՀՊՄՀ-ն քննարկմանը հրավիրել էր Երևանի պետական, Գ. Վ. Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական և Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանների ուսանողներին, որոնք նույնպես ակտիվորեն մասնակցեցին օնլայն քննարկմանը:

Կոնֆերանսի սկբում ուսանողները խոսեցին Հայոց պատմություն առարկայի պարտադիր դասավանդման կարևորության մասին: Բացման խոսքից հետո ուսանողներին ողջույնի խոսք հղեցին ՀՊՄՀ Կուլտուրայի, Պատմության և հասարակագիտության, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետների դեկանները՝ ստեղծված իրավիճակում խրախուսելով օնլայն քննարկման ձևաչափը:

Քննարկումները բավականին բովանդակալից էին և հետաքրքիր բոլոր մասնակիցների համար, որովհետև բացի պատմական ակնարկներից ուսանողները ներկայացնում էին նաև սեփական կարծիքներն ու դիտարկումները՝

«Դուք հաղթանակած ազգի սերունդն եք: Ցանկանում եմ, որ բոլորդ հիշեք, թե ինչ դասեր է տվել մեզ պատմությունը և հետևություններ անեք ողջ կյանքի համար: Միշտ հիշեք, որ դուք հաղթանակած ազգի հաղթող զավակներն եք»,- այս խոսքերով Մարիամ Եղյանը կատարեց կոնֆերանսի փակումը՝ շնորհակալություն հայտնելով դեկաններին և ուսանողներին՝ կոնֆերանսի աշխատանքներին միանալու և արդյունավետ մասնակցության համար:

Նշեմ, որ սա տիկին Եղյանի հետ առաջին համատեղ աշխատանքը չէ: Մայիսի 5-ին Կուլտուրայի և Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետների 3 ուսանողուհիներ Հայոց պատմություն առարկայից պրակտիկ դաս վարեցին Մեղրածորի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների համար: Ուսանողները ներկայացրին Հայրենական մեծ պատերազմի մասին պատմական ակնարկներ և խոսեցին դրանց հոգեբանական ազդեցությունների մասին:

Մայիսյան հաղթանակների արժևորումը, դրանցով հպարտանալը յուրաքանչյուրիս գործն է: Եվ նման նախաձեռնությունները լինելու են շարունակական:

Էլեն ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ,
Լրագրություն 1-ին կուրս

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԳ

Մայիսի 9-ին՝ Մեծ հաղթանակների եռատոնին, տեղի ունեցավ Արցախի Պաշտպանության բանակի «Ասպետ» համույթի նոր տեսահոլովակի պրեմիերան, որ կոչվում է «Կամք ու պայքար»: Երգի երաժշտությունը գրել է Կարեն Ջաքարյանը, խոսքերի հեղինակը մեր համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի շրջանավարտ Վարդան Գալստյանն է, որ ծառայում է Արցախի դ զորամասում:

Հայոց մեծ սուրբ հողում ծնվեցինք,
Լեռներից ուժ առած՝ ապրեցինք,
Հողից, քարից,
Շինեցինք մեր հին տունը նորից…

Հայրենասիրական այս երգը կատարում են զորամասի հինգ զինվորներ: Այն մեծ հավանության է արժանացել սոցցանցերում:

Մանկավարժական համալսարանի սանը երեք տասնյակից ավելի երգերի հեղինակ է: Նրա հեղինակային երգերը շատ հայտնի երգիչներ են կատարում: Վարդանի «Սրտիս հասցեն» երգը երիտասարդ երգիչ Գոշի մատուցմամբ ճանաչվել է տարվա լավագույն երգ, որն ունի 8 միլիոնից ավելի դիտում:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ

Եվ դարերի մեջ խավար ու դաժան,
Ազգն իմ՝ հար պանդուխտ ու հալածական,
Որ նենգ թշնամին քշեց անվարան,
Ոտնակոխ արեց հողը սրբազան,
Որ արյան գնով քաջերը առան:
Դարերի միջից վեհ ու միշտ հպարտ,
Կոփված մեծ կռվում՝ տեսած սուր ու հուր,
Մի սերունդ ծնվեց աներկյուղ, անպարտ,
Որ բանակ ստեղծեց աննկուն ու կուռ:
Մեր հերոսները կամք ունեն համառ.
Գերադասում են մահը ապրելուց՝
Հանուն հայ հողի, հանուն Հայ անվան:
Լուռ խոնարհվում ենք նահատակների
Ու նրանց գործած սխրանքի առաջ,
Փառաբանում ենք մեր զինվորներին,
Հայոց բանակին՝ մեզ համար շատ թանկ,
Ու հպարտությամբ ասում ենք ահա՝
Շնորհավո՛ր Զինվոր, շնորհավոր Բանակ:

Լուսինե ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, 1 կուրս



Մայիսյան խոհեր՝ հաղթանակների արժևորման հետքերով

Զարմանալի խորություն ունի հայրենիքը… դա կա՛մ անչափելի է, կա՛մ, լավագույն դեպքում, կարելի է չափել զգայարաններով՝ այն էլ Մասիսին կառչած ու հայրենի օրհներգով ազնվացած… Հայրենիքը մի տանիքի տակ երջանիկ ապրելու հավակնոտ ցանկությունն է, իսկ հայրենասիրությունը՝ կենսակերպ՝ այդ փետրված կյանքով ապրելու ամենաորակյալ ձևը՝ այդ բազմաշերտ ու զգայուն աշխարհը փոփոխվող աշխարհի հետ զգուշորեն ներդաշնակելու հանձնառությամբ: Եվ ամեն մի անզգույշ քայլ պատմական ճշմարտությունը հաստատելու ճանապարհին փոխել է և փոխում է հնարավորություն-

ների և հեռանկարների աշխարհագրությունը, իսկ սա ընկալելի է դառնում նույն պահին, հենց մեր հայացքն ուղղում ենք անցյալի տագնապահարույց իրականությանն ու նրանում հայոց տառերի իմաստությամբ ապրել սովորող վեհերոտ հոգիներին… Ի՜նչ ցավահույզ են մեր մատյանների արյունոտ էջերը, և որքա՜ն բարեհույս են նույն մատյանների արևոտ էջերը: Հերոսները ծնվում են ոչ թե հերոսանալու, այլ հայրենիքը հերոսացնելու համար, որովհետև հերոսանալ փորձողը եսասեր է, ինքն իրեն է սիրում, իսկ հերոսացնողը մարդասեր է և փառք է ծնում… Մինչդեռ իրական հերոսը հայրենիքն է, իսկ մենք՝ հեղինակը, որ կանք ու ապրում ենք այդ հերոսի մեջ ու նրանով: Հերոս է, ուրեմն մարմին ու հոգի ունի, ապրում է, շնչում, ուրախանում, արտասվում, այն նույնքան իրական հերոս է անգամ բանաստեղծություններում, պատմվածքներում, վեպերում և վիպակներում և կամ ակնարկներում՝ իհարկե, լավագույն գրողների հետ գլուխ գլխի տված, և եթե մտապատկեր ասենք, ապա միայն մեր երազներում կա՛մ խոհերում, կա՛մ նույն բանաստեղծների դեռ չծնված գործերում:

Ուրեմն շա՜տ կարևոր է մեր հաղթանակների արժևորման ճանապարհին ճիշտ ըմբռնել և մեր իրականությանը համապատասխանող բովանդակություն դնել «հայրենիք» և «հայրենասիրություն» բառերի մեջ: Հայրենասիրությունը հայրենիքի սերն է, բայց ոչ թե նրա հանդեպ, այլ նրան սիրելի դարձնելու և նրան սիրելի լինելու չափ, և ոչ թե նրա գիրկն ընկնելու, այլ ձեռքից բռնելու և առաջ տանելու պատասխանատվությամբ: Եվ մենք ավելի հաճախ ունենալ ենք այդ պատասխանատվությունը՝ հակառակորդի դեմ և նրա քայլերին ընդառաջ գնալիս՝ ծագած հարցերը կարգավորող կողմի դերը կրելով մեր ուսերին, վկա՝ Եղեռնի բեռը սրտներիս՝ 1992-ին Շուշիի ազատագրությունը, վկա՝ Արցախի պաշտպանական բանակի ստեղծումը, վկա՝ Հայրենական պատերազմին մեր խոսուն մասնակցությունը, վկա՝ մայիսի 28-ին Առաջին հանրապետության ստեղծումը, վկա՝ իրենց ռազմիկների ճամփին աղիողորմ, սրտագին ու խանդավառ սպասող մայրերն ու հարսները, քույրերն ու մանուկները, և որքա՜ն գեղեցիկ է սպասումը, երբ սերը սուրբ է… իսկ սուրբ լինելը՝ ինքնության կատարյալ հիմք:

Մի պահ խիստ ու հետաքրքրական մտորումներդ ուղղի՛ր մայիսյան հերոսամարտերին և զորացի՛ր դրանց գաղափարական խանդավառությամբ. ամենահայկական այդ հիշողության մեջ այսօրվա ազատությունը երեկվա զինվորների արյունով է մկրտված: Քո զայրացկոտ հայացքով մի պահ կա՛նգ առ այն պատմական «խաղի» վրա, երբ մեզ համար հորինել են կռիվներ, արձակել արյունոտ հրամաններ, կաշկանդել սեփական լեռներում ազատ շնչելու իրավունքի սահմանները, և պատվո՛վ լցվիր, որ կարողացել ենք հարություն տալ մեր խաղաղ առավոտներին՝ օտարներին հավատացնելով, որ իզո՜ւր են մեր ինքնությունը ոտնահարելու բոլոր փորձերը, ու հիմա մի պահ հայացքդ ուղղի՛ր քո իսկ սրտին, հիացի՛ր հայրենիքի սիրո խորությամբ ու շերտերով, չափի՛ր այդ սիրո գինը. չե՞ս կարողանում, որովհետև չչափվող, չավարտվող այդ սերը հայրենիքը կիսատ թողնելու գինն ունի… իսկ կորուստը հնարավոր չէ չափել… Սրբազան ու չսրբագրվող այդ սիրո գինն ունեցող հաղթանակների արժևորումը սկսվում է դիրքերում հայրենիքի սահմաններն արթուն պահող զինվորների՝ իրենց սխրանքի գիտակցությունից, Կոմիտասի, Սայաթ-Նովայի երգն ու երաժշտությունը կենդանի պահող երգահաններից, մեսրոպյան տառերն ամեն օր արժևորող աշակերտներից, Խորենացին ճարտարապետի ստեղծարարությամբ սերտած ուսուցիչներից…

Ուրեմն՝ մեր բաժին առաքելությունը սուրբ պահենք… Շնորհավո՛ր, հաղթանակաստե՛ղծ մայիսյա՛ն հայորդի:

Համլիկ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հոգեբանության հիմնախնդիրներին…

➢2 սարանի հոգեբանության ֆակուլտետի անձի հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր Դմիտրի Ա. Լեոնտևը (ՌԴ), Առողջության հոգեկան հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Մենդելևիչը (ՌԴ), Յարոսլավլի պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ, (ՌԴ) Վլադիմիր Ա. Մազիլովը և ուրիշներ:

Առաջին համարում հրապարակվել է ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Միրզախանյանի ներածական խոսքը և կլինիկական հոգեբանության, հոգեբանական մեթոդաբանության, տարիքային և զարգացման հոգեբանության, ինչպես նաև մանկավարժության և նրա առանձին մեթոդիկաների հիմնախնդիրների վերաբերյալ 11 հոդված: Ռոլորտին վերաբերող հետազոտական ուշագրավ վերլուծություններ են ներկայացրել հոգեվերլուծաբան Ասբետ Արյանը (Արգենտինա), Բերգենի համալսարանի պրոֆեսոր Դավիդ Ջ. Կուկը, Յարոսլավլի Կ.Դ. Ուշինսկու անվան ՊՄՀ-ի ընդհանուր և սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ Վլադիմիր Մազիլովը, դոկտոր Նիկոլայ Վերեսովը (Մոնաշի համալսարանի կրթության ֆակուլտետ (Ավստրալիա):

Գիտական հանդեսը նախատեսված է մանկավարժների, հոգեբանների, բարձրագույն կրթության համակարգում աշխատողների և, առհասարակ, մանկավարժահոգեբանական գիտությունների զարգացմամբ շահագրգիռ յուրաքանչյուրի համար:

Ամսագիրը ներգրավված է միջազգային CROSSREF, Platform & workflou by OJS/PKP համակարգում:

«Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները» ամսագրի առաջին համարի հետ կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ.

https://miopap.aspu.am/index.php/miopap/issue/view/17

«Գրականությունը սեր է՝ մեծ, ապրեցնող սեր»,-

ասում է ՀԳՄ անդամ, բանաստեղծ Խաչիկ Մանուկյանը

- Հարգելի պարոն Մանուկյան, ինչպե՞ս կբնութագրեք ժամանակակից հայ գրականությունը: Քանակական ու որակական առումով ի՞նչ անհատականություններ կան, որոնք երիտասարդ սերնդին կարողանում են իրենց ստեղծագործություններով տանել դեպի ճշմարտության ակունքը, օգնում են հասկանալ և իմաստավորել կյանքն ու շրջապատող աշխարհը, իրարից զատել իրականն ու անիրականը, ի վերջո, իրենց գրականությամբ ճաշակ ու մտածողություն են ձևավորում:

- Ձև, կեցվածք բանեցնողներին շրջանցելով, պիտի գտնես այն հեղինակներին, որոնք մարդկային ճշմարիտ արժեքներ են ստեղծում: Վերջին ժամանակահատվածում, առանց վերապահումների, աշխարհի լավագույն գրականությունը հայ գրականությունն է, իհարկե, Հրանտ Մաթևոսյանի առաջնորդությամբ: Ես երազում եմ ստեղծել այդ մատենաշարը, որն ընթերցողին ազատելով ավելորդ փնտրտուքից, միանգամից հաղորդակից կդարձնի մեզանից վաղաժամ հեռացած տաղանդավորների՝ Աշոտ Ավդալյանի, Վրեժ Իսրայելյանի, Արմեն Մարտիրոսյանի, Լևոն Խեչոյանի, Ռաֆայել Նահապետյանի, Տանյա Հովհաննիսյանի, Սիփան Շիրազի, Սամվել Ջուլոյանի, Հովհաննես Գրիգորյանի, Հրաչյա Սարուխանի, Ղուկաս Սիրունյանի, Հրաչյա Բեյլերյանի և էլի շատ հեղինակների ստեղծագործություններին: Ազգի ուժն ու ոգին խտացված են նաև գեղարվեստական բարձրաժեք ստեղծագործություններում, և այն անտեսելը՝ խոսքի ուժը թերագնահատելն ու իրական արժեքը չգիտակցելն է: Գրականությունը սեր է՝ մեծ, ապրեցնող սեր, որը Սևակի ասած՝ Աստծո քարտուղարները փոխանցում են ընթերցողին:

- Կարծում եմ, հատկապես ինքնամեկուսացման այս օրերին, այնքան էլ արդիական չէ այն կարծիքը, թե նոր սերունդը չի կարդում կամ քիչ է կարդում: Հիմա սոցցանցերի գրառումներից կարելի է ենթադրել, նոր կորոնավիրուսը գիրք կարդալու հնարավորություն ու ժամանակ է ընձեռել շատերին, այդ թվում՝ երիտասարդներին: Ինչ եք կարծում, ի՞նչ գրքեր են կարդում, ո՞ր գրքերին են տալիս նախապատվությունը, նրա՞նց, որ համացանցում գովազդվում են ու մոդայի՞կ են համարվում:

- Որոշ հրատարակիչներ իրենց սեփական յալանչիներն ունեն, որոնք գետնաքարշ հույզերի մանվածքներ հրապարակելով, գորշ միջակությանն այնպիսի ներկայություն են ապահովում, որ փորձված ընթերցողն անգամ կարող է ծուղակում հայտնվել: Այդ վեհերոտ գոյանքները մաթեմատիկական հաշվարկներով են փորձում արժևորել իրենց խլանքը՝ գրականագիտական մակերեսային իմացություններ բանեցնելով: 10 տարի առաջ եկած այսպահականներն այսօր չկան: 10 տարի հետո այսօրվա այսպահականներն էլ չեն լինի: Եվ այն խաբկանքը, որին տրվում են գրասերները, ուշ-ուշ բացահայտվելու է:

Այսօր էլ գրական լուրջ արժեքներ ստեղծվում են: Ցավոք, մշակութային սխալ քաղաքականությունը թույլ չի տալիս եղած սուղ միջոցները նպատակային օգտագործել: Կադրային քաղաքականությունն այս ոլորտում ոչ թե կաղում, այլ դժվարությամբ սողսողում է: Ջառանցանքների քվեն շահեկան է դառնում կեղծ ավանգարդիստների փոխադարձ օվացիաներում:

- Դուք հրաշալի բանաստեղծ եք, Ձեր ստեղծագործություններում ժամանակի վազող ընթացքն է՝ իր ամենատարբեր դրսևորումներով, որում ընդգծված շեշտադրություն կա՝ ազնիվ լինել մարդու և նույն այդ ժամանակի առաջ: Ի՞նչ է Ձեզ համար պոեզիան և ի՞նչ եք ակնկալում բարձր տեխնոլոգիաների մեջ վերուվարող ընթերցողից:

- Շնորհակալ եմ Ձեր գնահատանքից: Պատանեկան տարիներին կարծում էի, թե տղամարդու գործ չէ՝ առանձնանալ և, ինքնամփոփվելով, դուրս բերել ներսիդ առկայծումները: Ավելի ուշ հասկացա, որ չկա առավել համարձակություն պահանջող մեկ այլ ոլորտ, քան գրականությունն է, որն արարողները մերկ հոգով կանգնում են հանրության և ժամանակի առաջ: Պոեզիան, իսկապես, մաքրում է հոգու արյունը, լիցքավորում և ուժ է տալիս՝ աստվածապարգև ընթացքին ներդաշնակվելու:

- Մեր ընթերցողներին մի փոքր ներկայացրեք ձեր ստեղծագործական անցած ճանապարհը:

- Ստեղծագործել և տպագրվել եմ դպրոցահասակ տարիներից: 1987 թվականին լույս տեսավ առաջին գիրքս և ջերմ ընդունելության արժանացավ: Բանաստեղծական երկրորդ՝ «Վիրավոր խաչը» ժողովածուս նկատելի եղավ գրականության հսկաների կողմից՝ Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան, Վահագն Դավթյան: Անվանի գրականագետները՝ Ֆելիքս Մելոյան, Լևոն Սկրտչյան, վաղամեռիկ Գրիգոր Հակոբյան՝ բարձր գնահատանքներով հանդես եկան: Առաջին չորս-հինգ գրքերս անգիր գիտեի: Հիմա շուրջ երկու տասնյակ եմ և հիշողությունիցս դուրս եմ մնացել: 2015-2016 թթ. «Զանգակ» հրատարակչությունը լույս ընծայեց իմ քառահատորը, որտեղ ամփոփված եմ միևչ այդ հրապարակված գործերիս զգալի մասը: Համագործակցել եմ «Հայաստան» և «Արմավ» հրատարակչությունների հետ: «Արմավը» շուտով լույս կընծայի «Վերջին մեղրամիս» բանաստեղծական ժողովածուս, որն ամբողջությամբ սիրային բանաստեղծություններով է ներկայանում, և վստահ եմ, որ լավ միջոց է լինելու աշխարհով մեկ ասպատակող թագակիր վիրուսին գահընկեց անելու համար:

- Պոեզիայի միջոցով կարողանո՞ւմ եք խուսափել կյանքի նեգատիվ երևույթներից և, ինչպես դուք եք ասում, մարդուն շրջապատող կեղծ հորինվածքներից: Չէ՞ որ պոեզիան ազնվացնում է, մաքրագործում, օգնում վեր կանգնել կյանքի ամեն տեսակ ճղճիմություններից...

- Այո, պոեզիան վեհացնում է մարդուն: Երբ ասում ես՝ «Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական»՝ միանգամից մեր պատանի հանճարի աստվածային ճախրանքներին ես միանում: Ավելի մեծ հարստություն չգիտեմ, քան ոգեղեն գանձն է, որն արվեստի տարբեր ճյուղերով տրվում է դեպ իրեն եկող հավատավոր ուխտավորին: Վերընթերցեք Հայոց մեծերին՝ Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց... և տեսեք ինչպես կփառավորվեն ձեր հոգիները: Եվ ոչ միայն պոեզիան, առողջ գրականությունն ընդհանրապես, մարդու ներաշխարհը հարստացնող եզակի գանձարան է: Մի առիթով ասել եմ՝ գրողները մոլորակի վրա շարված լապտերներ են, որոնց լույսի տակ Աստծո կիսադեմն է երևում:

- Դուք հաճախ եք մյուս գրողների հետ հյուրընկալվում մեր համալսարանի ապագա բանասերներին, դասախոսների, և ուսանողների հետ հանդիպումներն ավանդական են դարձել: Որպես գրողի՝ ի՞նչ են տալիս Ձեզ երիտասարդների հետ հանդիպումները, ի՞նչ որակներ եք տեսնում նրանց մեջ և ինչպիսի՞ կուզենայիք տեսնել նրանց կյանքում և մարդկային շփումներում:

- Ուժը, թռիչքը, լուսավոր խենթությունները երիտասարդության մեջ են: Համո Սահյանին հյուրընկալվել, զրուցում էինք, ավարտին ասաց՝ ճիշտը դու ես: Ինձ անհասկանալի թվաց, և Վարպետը ժպտալով ասաց՝ էս տարիքիս ամենախելոք բանն էլ ասեմ՝ մեկ է սխալ եմ, քո տարիքին սխալ բան էլ ասեի, միևնույնն է, ճիշտ էի: Ձեր համալսարանում տեղի ունեցած հանդիպումներից մեկում, ինձ համար էլ մի բացահայտում եղավ, երբ ձեր հարգարժան դասախոսն իր ելույթում հայտնեց, որ ՀՀ նախագահի մրցանակից ինձ զրկեցին Սասնա ծռերին և Արթուր Սարգսյանին նվիրված «Հաց եմ բերել, տղերք» բանաստեղծությանս համար: Այդ հանձնախմբի որոշ անդամներ այսօր էլ շարունակում են մնալ մրցանակային հանձնաժողովի կազմում:

Կուզեի՝ այսօրվա երիտասարդները մեր ազգային հարուստ մշակույթի արժանի ժառանգորդը դառնային և հաղթական ընթացք ունենային ողջ կյանքում:

- Կարո՞ղ եք անկեղծ լինել ընթերցողի հետ և ասել՝ արդյո՞ք մերօրյա գրողները կարողանում են իրենց ասելիքը հասցնել ընթերցողին, և արդյո՞ք բոլորն ասելիք ունեն... Այսօր կարող է բանաստեղծություն գրել և տպագրվել ցանկացած մեկը, ով չունի անգամ պատկերային լեզվամտածողություն, ով գրում է՝ ինչ մտածում է ու իր կենցաղային մտածողությունը ոչ միայն թղթին է հանձնում, այլև տպագրում...

- Տոլստոյն ասում էր՝ ուժեղները պարզ են լինում: Գրողը պետք է կարողանա քաոսից ներդաշնակություններ կորզել և ոչ թե խրթին մտքերով քողարկել հոգու սնանկությունը:

Տարիներ առաջ էր, «Նորք» հանդեսի խմբագրատանն էի, Ֆելիքս Մելոյանի մոտ մի անվանի գրականագետ եկավ: Մելոյանը վերջինիս մի հոդվածի առիթով ասաց՝ էդ ի՞նչ էր գրել, որ գովաբանում էիր: Հյուրը փորձեց արդարանալ, ասելով, որ իր ներկայացրած գրողն այս տողով սա է ուզում ասել, այն տողով՝ մի ուրիշ բան: Մելոյանի ծաղրը չուշացավ՝ է, թող ասի, հիմա ի՞նչ, տնետուն անցնելու եք, ընթերցողներին բացատրեք, թե ի՞նչ է ուզում ասել:

- Երբ թերթում ենք հայ դասականների էջերը, տեսնում ենք, որ նրանք բավականին անողոք են եղել գործող իշխանությունների վրիպումների ու բացթողումների հանդեպ՝ մատնանշելով յուրաքանչյուր մարդու, երկրի ներկայի ու ապագայի հանդեպ նրանց պատասխանատվությունը: Մեր գրողները նման էջեր ունե՞ն, որոնք կարող են թողնել եկող սերունդներին:

- Իհարկե, ունեն: Եթե փորձենք մեկտեղել վերջին տարիների նման գործերը՝ հատորներ կկազմեն:

- Ի՞նչ կմաղթեք երիտասարդ ստեղծագործողներին:

- Ինչ էլ մաղթեմ, միևնույնն է՝ իրենց ապրածն է գիր դառնալու: Մարդուն մարդ պահող արժեքներին դավանելով միայն կարող են ստեղծել մնայուն գործեր:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի և դոցենտ Մարգուշ Միրումյանի համահեղինակությամբ լույս է տեսել «Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան» աշխատանքը:

Բառարանի գիտական խմբագիրն է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Ս. Գյուրջինյանը:

Բառարանում տրվում է հայերենագիտական տերմինների բացատրությունը՝ թեմատիկ (փնջային) եղանակով. յուրաքանչյուր տերմին մեկնաբանվում է բովանդակային համակողմանի ընդգրկումով, որ բառարանին հաղորդում է ուսումնական ձեռնարկի արժեք: Բառարանում հայերենագիտական տերմինները տրվում են ըստ բնագավառների՝ հնչյունաբանություն, գրաբանություն, ձևույթաբանություն, բառակազմություն, բառագիտություն, բառարանագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, լեզվի պատմություն, խոսք, տեքստ, ոճաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն և կետադրություն:

Աշխատանքում ըստ բաժինների տրվում է քերականական իրողությունների վերլուծության ընթացակարգը, բերվում են վերլուծությունների նմուշօրինակներ:

Վերջում տրվում է հայերենագիտական տերմինների ցանկը:

Այն յուրահատուկ բուհական ձեռնարկ է, որ գիտական չափանիշներով ներկայացնում է հայոց լեզվի բոլոր բաժինները՝ հիմքում ունենալով հայերենի տերմինային համակարգը: Հայերենագիտական տերմինների ուսումնասիրությունը կարևորվում է ուսանողների համար այն առումով, որ տերմինները կազմում են լեզվի մասին գիտության առանցքը:



Բառարանը կարող է օգտակար լինել դպրոցական և բուհական համակարգերում սովորողներին, հայոց լեզվի ուսուցիչներին, լեզվի մասնագետներին և, առհասարակ, բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են հայոց լեզվի տարաբնույթ հարցերով:

ՀՊՄՀ-ում գործող Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի 2019 թ. աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքը կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում և տպագրվել է Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մեկենասությամբ:

Սա մարդկության ուղղված բազմախորհուրդ դաս էր

Մասնագետների նոր սերնդի պատրաստումն ու կյանքի ուղեգիր տալն, ըստ էության, միշտ էլ չափազանց պարտավորեցնող գործունեություն է: Այս գործընթացում մեր թափած ջանքերի արդյունքներն ու գնահատականը վայելում ենք միայն հետագայում, երբ տարիների հեռավորությունից լսում ենք նրանց շնորհակալության ու երախտիքի խոսքերը, ականատեսն ենք դառնում նրանց ձեռքբերումների, մասնակիցը՝ հաճախ ծագած մասնագիտական խնդիրների հաղթահարման գործընթացի: Սովորական, այսպես ասած՝ խաղաղ պայմաններում մենք ոչ միշտ ենք գնահատում մեր և մեր գործընկերների ջանքերը, երբեմն էլ չենք նկատում ուսանողների հոգսերն ու դժվարությունները:

Եվ այսպես, ողջ աշխարհի նման, մենք էլ, մեր ուսանողներն էլ, հայտնվեցինք արտակարգ իրավիճակում, թագաժահրով պայմանավորված համավարակը մեզ կանգնեցրեց ոչ ստանդարտ գործունեություն ծավալելու անհրաժեշտության առջև:

Հեռավար դասերն, անշուշտ, նորություն են մեզանում: Խոստովանեմ՝ դրանց ես չափազանց դժվարությամբ ընտելացա, և բոլորովին էլ խոսքն աշխատանքային միջոցների դժվարության մասին չէ (դրանք էլ մի կերպ հաղթահարեցի), դժվար է, ես կասեմ (գոնե մեզ համար) անհիմաստ, առանց ուսանողների մեջ շրջելու, առանց նրանց կողքին կանգնելու, առանց նրանց աչքերի մեջ նայելու, լսարանի տարբեր անկյուններից աշխույժ արձագանքներ լսելու դաս վարելը, երբ պակասում է համագործակցությունը, չի ապահովվում ուսանողակենտրոնությունը, ուսանող-ուսանող և ուսանող-դասախոս փոխադարձ կապը:

Ինչ արած, այս պայմանների համար միակ ճիշտ ելքն էր: Սակայն, ինչն էր հետաքրքիրը. բազմաթիվ ուսանողներ հեռավար դասի ընթացքում դրսևորում են ինքնատիպ վարք՝ անսպասելի ազատություն, ակտիվություն, հարցասիրություն, զրուցելու, բանավիճելու ցանկություն: Ուսանողները չեն սպասում դասի ավարտին, հիմնականում ես եմ հայտարարում, որ դասին տրամադրվող ժամանակից անցել է 20-25 րոպե: Այս երևույթներն ինձ հաճելիորեն զարմացրին և մտորումների ու վերլուծությունների տեղիք տվեցին, որոնց, անշուշտ, անդրադառնալ է պետք:

Հեռավար կրթությունը մեզ լուրջ դժվարությունների առջև կանգնեցրեց՝ հատկապես ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շուրջ իրականացվող գործընթացում: Դրանք առաջին հերթին պայմանավորված էին՝

-ուսանողների հետ ամենօրյա առերես հանդիպումների անհնարինությամբ և սոցցանց-հանդիպումների դասի ցածր արդյունավետությամբ,

-դպրոցներում դասեր լսելու, փորձարարական դասեր վարելու (փորձարարական մասի բաղադրիչում դրանք կարևոր են) անհնարինությամբ,

-ուսանողների մի մասի՝ համակարգչից օգտվելու անկարողությամբ, հաճախ նաև բացակայությամբ,

-անակնկալ հեռավար կրթության անցնելու մեր անպատրաստվածությամբ:

Թեև ժամանակի ընթացքում այս դժվարությունների մի մասը հաղթահարվեց, այնուամենայնիվ, ազնվորեն նշեմ, որ ես ինքս մեր վարած դասերի արդյունավետությամբ բավարարված չեմ:

Մասնավորապես դժվարությունների առջև ենք կանգնում միջանկյալների և բանավոր ու գրավոր քննությունների գործընթացում, որոնք նպաստեցին ուսանողների գիտելիքների ու կարողությունների հավուր պատշաճի դիտարկմանն ու գնահատմանը: Հաշվի առնելով նշված և այլ բազմաթիվ հանգամանքներ՝ ողջ հեռավար ուսուցման ընթացքում մենք փորձում ենք աշխատել ի շահ ուսանողի՝ «մեր նկատմամբ՝ պահանջկոտություն, ուսանողների նկատմամբ՝ հանդուժողականություն» կարգախոսով:

Բազմաթիվ հոգեբաններ հաստատում են, որ «Տանը մնա» հրահանգը լուրջ սթրես է ոչ միայն աշխատող և սովորող մարդկանց, այլև բոլոր նրանց համար, ովքեր ընտելացած են ընտանեկան անաղմուկ կյանքին: Հաշվի չառնելով նշված հանգամանքները՝ մենք կվնասենք ողջ հասարակությանը, որի հետևանքներն արտակարգ իրավիճակի ավարտից հետո առավել ակնհայտորեն կզգանք:

Ես վստահ եմ, որ անցնելու են այս օրերը, մենք դարձյալ շարունակելու ենք ապրել մեր առօրյա կյանքով, բայց, կարծում եմ, որ այս ամենի ավարտից հետո մենք հանդիպելու ենք միմյանց իբրև այլ՝ նոր մարդիկ. մենք մեր ձեռքբերումների շնորհիվ և կորուստների պատճառով դարձել ենք այլ հասարակություն՝ բազմաթիվ դասեր ենք քաղել այս վիճակից, տարաբնույթ արժեքների անհրաժեշտությունը կարծես նորովի ենք գիտակցում ու իմաստավորում. համոզվեցինք, որ կյանքը գեղեցիկ է, երբ մենք մարդկանց մեջ ենք և նրանց հետ, որ երջանկություն է աշխատելը, անգնահատելի գանձ են այն մարդիկ, որոնք ապրում են մեր շրջապատում:

Սա բազմախորհուրդ դաս է մարդկությանը, որի բովանդակությունն ու ուղերձները պիտի սերտել և իմաստավորել մարդկության սիրո, բարու և հանդուրժողականության համատեքստում:

Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Ուսումնառություն արտերկրում՝

Մանկավարժական համալսարանի մի խումբ ուսանողներ ընթացիկ տարվա 2-րդ կիսամյակի մեկնարկին մեկնել էին տարբեր երկրներ: Նրանք Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում տարբեր բուհերում շարունակում են իրենց ուսումնառությունը: Աշխարհում նոր կորոնավիրուսի տարածման հետևանքով տարբեր երկրներում ուսումնառող աբովյանականները ներկայացրել են իրենց տպավորությունները:

Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողներ Լիլիթ Գալստյան, Անահիտ Փանոսյան (Ֆինլանդիա, Օուլուի համալսարան)

Հիշում ենք, թե ինչպիսի մեծ սպասումներ, ակնկալիքներ ունեինք Ֆինլանդիա մեկնելիս դեռ Հայաստանում պլանավորում էինք յուրաքանչյուր օրը: Հունվարի 7-ին առաջին անգամ մասնակցեցինք դասի, ամեն բան նոր էր՝ մարդիկ, կանոնները, դասերը, և թվում էր՝ հինգ ամիսների ընթացքում հազիվ թե կարողանանք յուրացնել բոլորը: Բայց ով իմանար, որ մեզ է սպասում «թագավարակը». մարտի 13-ին հայտարարվեց արտակարգ իրավիճակ և ժամանակավորապես փակվեց համալսարանը: Աշխարհի տարբեր երկրներից մեր ընկերներից շատերը ստիպված էին վերադառնալ հայրենիք:

Չնայած արտակարգ իրավիճակին՝ ինքնամեկուսացում ասվածը չափազանցված է գոնե մեզ համար: Օուլուում չկան քաղաքում տեղաշարժվելու համար խիստ սահմանափակումներ, իսկ բնակարանում, որտեղ ապրում ենք, հաճախ ենք կազմակերպում ընկերական հավաքույթներ, ծանոթանում տարբեր մշակույթների, խոհանոցների՝ փորձելով հնարավորինս արդյունավետ օգտագործել կարանտինը: Շրջապատված լինելով մեր նոր, բայց չափազանց ջերմ ու սիրալիր ընկերներով, հոգ չէ, որ ամբողջ օրը տանն ենք անցկացնում, զրույցներ ամենատարբեր թեմաների շուրջ, մի բաժակ տաք թեյի շուրջ ֆիլմի դիտում, ազգային ուտեստների պատրաստում. թերևս լավա-գույն առօրյան, որի մասին չէինք էլ պատկերացրել՝ չմոռանալով կրթվելու մասին: Համալսարանի փակվելուց անմիջապես հետո անցում կատարեցինք օնլայն ռեժիմի, որն իրականացվում էր նույնքան լրջորեն և արդյունավետ, որքան առերես դասընթացները: Կրթություն ստանալու մեծ ցանկությունը մեզ բերեց այստեղ, իսկ նորահայտ ընկերների ջերմությունը ստիպում է մնալ, և հենց այդ նույն ընկերներն էլ հետագայում կլինեն կրկին ու կրկին ճանապարհորդելու արդարացված պատճառ:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանող Վաչագան Աբովյան (Լիտվայի Վիտաուտաս Մագնուսի անվան համալսարան)

Սկզբնական շրջանում այդքան էլ բարդ չէր թվում, որովհետև նոր էր ամեն ինչ: Օրեցօր, սակայն, ծանրությունն զգացվում էր: Այս ընթացքում դասընթացները կազմակերպվում են առցանց, բայց իմ մասնագիտության դեպքում մի փոքր յուրահատուկ է. որոշ առարկաներ՝ օրինակ դաշնամուրը, անցկացվում են տեսանյութեր փոխանցելով, իսկ մնացած առարկաներն ինչ-որ չափով կարողանում ենք անցկացնել առցանց:

Պետք է նշեմ, որ «Խմբերգային դասարան» առարկան նույնպես չենք կարողանում համակարգել, որովհետև գործնականորեն անհնար է անցկացնել դա առցանց տարբերակով: Տեխնիկական հարցերով համալսարանը միշտ ուշադիր է և պատրաստ աջակցելու խնդիրների դեպքում: Օրվա ընթացքում շփվում եմ հարևանությամբ բնակվող այլ ուսանողների հետ, ֆիլմեր դիտում, զբոսնում՝ պահպանելով պահանջները, անցկացնում տեսադասեր և կատարում առաջադրանքները:

Օտար լեզուների ֆակուլտետի ուսանողուհի Ալինա Պողոսյան (Իսպանիայի Վալադոլիդի համալսարան)

Իսպանիայում ինքնամեկուսացումն անցնում է այնպես, ինչպես մնացած երկրներում, մենք իրավունք չունենք դուրս գալու, զբոսնելու, համալսարան գնալու և այլն: Նշեմ, որ բուհը մեկուսացման առաջին իսկ օրերից շատ արագ կազմակերպեց առցանց ուսուցումը: Դրական կողմերից մեկն այն է, որ բաց չենք թողնում դասընթացները, սակայն երբեմն բացասական կարող են լինել որոշ տեխնիկական խնդիրներ: Մյուս բացասական կողմն այն է, որ դասախոսները երբեմն ոչ այնքան լավ են տիրապետում անգլերեն լեզվին, ինչն էլ դժվարացնում է աշխատանքը:

Պետք է հավելեմ նաև, որ ինքնամեկուսացման առաջին օրերից կապի մեջ եմ Իսպանիայում Հայաստանի դեսպանության աշխատակիցների հետ, և վերջիններս շատ պատրաստակամ են և արագ արձագանքում են իմ բոլոր հարցերին:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Թերթելով անցյալի էջերը

Մովսես Գորգիսյան.

«Կեցցե այն Հայաստանը, որ վաղն է գալու»

«Սուգը հավերժ է, եթե պայքար չկա, մենք միշտ կսգանք, եթե չպայքարենք...»

Մովսես ԳՈՐԳԻՍՅԱՆ

Հայաստանի ազգային հերոս, քաղաքական գործիչ, հրապարակախոս, Ղարաբաղյան շարժման առաջնորդ Մովսես Գորգիսյանը ծնվել է 1961 թ. Երևանում:

1984 թվականին նա ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ռեժիսորական բաժինը: Ուսանողական տարիների նրա փայլուն նկարագիրը փաստում էր, որ մուտք է գործում արվեստի բնագավառ որպես հասուն երիտասարդ: Պատահական չէր, որ անվանի ռեժիսոր Արման Մանարյանն ու Հենրիկ Մարգարյանը «Ոսկի և հող» գեղարվեստական ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Շահեն Թաթիկյան) նկարահանելիս գլխավոր դերը վստահեցին Մովսեսին, որը նա կատարեց փայլուն՝ իրեն հատուկ ընդգծվածությամբ և, ավաղ, սեփական ճակատագրի բնութագրումով. Սանթուրը ռազմաճակատ մեկնեց հայրենիքը պաշտպանելու և չվերադարձավ: Այդպես էլ ինքը՝ Մովսես Գորգիսյանը:



Ամուսնացել է իր համակուրսեցու՝ Ռուզանի հետ, ով դարձավ Մովսեսի ամենահավատարիմ ընկերն ու գաղափարակիցը: 1982 թվականին ծնվեց նրանց դուստրը՝ Գոհարը:

1986-1987 թվականներին Մովսեսն աշխատել է Գորիսի դրամատիկական թատրոնում: Արցախյան շարժման առաջամարտիկներից էր: 1987 թ. ազգային ինքնորոշում միավորման անդամ էր և «Հրապարակայնություն» ու «Հայրենիք» ամսագրերի հիմնադիր-խմբագիրը:

Առաջինն էր, որ 1988 թվականի մայիսի 28-ին Ազատության հրապարակում եռագույնն է ծածանել: Ստեղծել է «Անկախության բանակ» ջոկատը որպես ապագա ազգային բանակի հիմք:

1990 թվականին զոհվել է Երասխի պաշտպանության ժամանակ:

1996 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով արժանացել է Ազգային հերոսի կոչման:

Մովսես Գորգիսյանը թաղված է Օհծեռնակաբերդում:

ՀՊՄՀ գիտական թանգարան

Ուսանողի օրագրից

Հիմա դրսում գարուն է

Գարուն է դրսում: Ամեն ինչ զարմանալիորեն կանգ է առել: Օրվա քամու հետևից աննկատ վազող, լուռ են դարձել երեկվա շնչող, սիրող ու ապրող հոգիները: Դրսում գարո՞ւն է: Չէ՛, երևի դրսում տարօրինակ գույն է, տան պատերից ներս նորից նույնը, ավել ու պակաս ոչինչ: Մայթեզրին ծաղկող մանուշակներ տեսե՞լ եք: Ես տեսել եմ բոլորովին վերջերս: Առաջ նրանք չկային: Աննկատ անցնում է արևը ու իր ամբողջ ջերմը թողնում գունատ պատերին: Դրսում հերթական գարունն է: Տաք քարերին նստում է անծանոթ կատուն, ես նրան տեսնում եմ մեր տան ապակուց: Կատուն վայելում է իր գարունը: Իսկ մե՞նք: Կատուն չի հավատում պատահականությունների, մենք հավատում ենք: Ու դա է մեր ու նրա չերևացող տարբերությունը: Կատուն սիրում է իր գարունը: Մենք սիրում ենք ուրիշինը: Մենք, ընդհանրապես, շատ ենք սիրում ուրիշինը: Մենք կարոտում ենք բառերը, ուրիշից վերցրած ու ուրիշին ձոնած բառերը. մեր կատուն ահա քուն է մտել:

Ես նորից նայում եմ դուրս: Գարնան ցեխն աննկատ թափված է ճափեզրին. ոչ մի ոտնահետք: Նրա միջից խոսում է նեղացած մարդը՝ լսող չունի: Նահանջում է բարի արևը, ու նա էլ լսող չունի: Գյուղի անծայրածիր փողոցներում նշմարում է անհագ մայրամուտը: Ուզում ես գրկել նրան, բայց ապակին չի թողնում: Կատուն բացել է աչքերը, նայում է ճառագայթող ակնագնդերով ու կարծես սպասում է, որ բացես իր առաջ տանդ դռները:

Մենք հաճախ ենք ուզում բացել մեր սիրտը՝ չիմանալով երբ ու ինչու: Մեր կատվի ուզածն ընդամենը մի բուռ է, որը նրան պետք է հենց այսօր: Գարունը կատվի աչքերի մեջ է: Ես պիտի բացեմ ապակին: Ուզում ես վազել տանիքից տանիք, դռնից դուռ, ուզում ես ընկնել: Տեսնում եմ, թե ինչպես են օրորվում խոտի կիսաչոր տերևները: Իսկ մե՞նք: Օրորվում ենք աթոռի վրա, երբ հանկարծ հիշում ենք, որ անցնում է կյանքիդ հերթական գարունը:

Իսկ դրսում գարուն է, որը կատուն տուն է բերում: Միայն պետք է բացել դռները: Կա տուն՝ բացում է: Սուրճի բույրը դիպչում է քթիդ, ու կատուն իր պոչով շոյում է ձեռքդ:

Հիմա դրսում գարուն է: Ու այն վազքի մեջ է, գնում է մեռնելու:

Կարլեն ՆԱՋԱՐՅԱՆ,
Բանասիրական ֆակուլտետ, երրորդ կուրս

Հեռավար դասի առավելությունն ու վնասները

Համացանցն ու դպրոցականները

Մեր կյանքն ընթանում է այնպիսի արագությամբ, կարծեք թե այն թռիչքներ է պարունակում և ոչ թե տարվա 365 օր: Արդեն հինգ տարի է, ինչ ավարտել եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի Սկզբնական կրթության ֆակուլտետը՝ «Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ: Ավարտական հետազոտական աշխատանքիս թեման եղել է «Համացանցի ազդեցությունը անձի ձևավորման գործընթացում»:

Աշխատանքիս նպատակն էր պարզել համացանցի ազդեցությունը երեխայի անձի ձևավորման, այսինքն՝ տարիքային առանձնահատկությունների վրա: Թեմայի շրջանակներում տարրական դասարաններում երկար հետազոտություններ կատարելու արդյունքում հանգել էի այն եզրակացությանը, որ համացանցի բացասական ազդեցությունն ավելի շատ է, քան դրականը, նաև բերել էի բազմաթիվ փաստեր և օրինակներ: Հիմնական շեշտադրումն արվել էր մանկական այն կայքերի վրա, որոնց ազդեցությունը գերիշխում էր: Որպես առանձին գլուխ ներկայացրել էի «Ֆեյսբուքյան հասարակություն» թեման, որտեղ առանձնահատուկ ուշադրության էի արժանացրել «ազատ»՝ ասել է թե շատ հաճախ անկիրթ ու գռեհիկ խոսքային դրսևորումներին, որոնք կարող են օրինակ լինել նոր սերնդի համար:

Ընտրված թեմայի արդիականությունն այնքան մեծ էր, որ ես, լինելով 3-րդ դասարանի դասվար, մինչև հիմա անդրադառնում եմ այդ խնդրին, որի շրջանակներում պատրաստել եմ բաց դաս՝ «Առանց հեռախոսի կյանքը գունեղ է թեմայով» թեմայով: Ընտրված թեմայի նպատակն էր երեխաներին ինչ-որ չափով բացատրել, թե որքան լավ է առանց լարվածության, առանց հոգնելու, առանց հեռախոսային խաղերի: Աշակերտներին ոգևորելու նպատակով նրանց հետ կնքեցի պարտավորագիր, որով նրանք պարտավորվեցին հավատարիմ մնալ իրենց ստանձնած պարտավորվածությանը:

Երեխաների ոգևորությունն անչափ մեծ էր, որովհետև պայմանավորվել էինք, որ յուրաքանչյուր օր հեռախոսային խաղի փոխարեն նրանք պետք է ստեղծագործեին մեկ խաղ իրենց ընկերների համար և դրանք պետք է ներկայացնեին մինչև մարտի 20-ը: Բայց, ինչպես ասում են, ուրբաթը շաբաթից շուտ եկավ. մարտի 13-ից դպրոցներն անցան օնլայն ուսուցման, և երեխաների ստեղծած հետաքրքիր նախագծերն ու խաղերը մնացին դասարանում:

Կրթական հեղաշրջում՝ ըստ պահանջի

Ժամանակաշրջանն ունի իր պահանջները, և մենք չենք կարող այն անտեսել, բայց և պարտավոր ենք գտնել հարմար տարբերակ, որ երեխայի մեջ պահպանվի ուսուցչի դերն ու արժեքը:

Հայաստանի Հանրապետությունում մարտի 13-ից հայտարարվեց արտակարգ դրություն, և հանրապետության յուրաքանչյուր ուսուցիչ հնարավորինն արեց՝ շարունակելով դասերը իր աշակերտների ունեցած տեխնիկական հագեցվածության կարողությունների և հնարավորությունների սահմաններում:

Օնլայն դասի օգտակարությունը

Այսօր արդեն առցանց դասի առավելությունները չենք կարող անտեսել. այն հնարավորություն տվեց, որ ծնողը տեսնի իր երեխային անմիջապես դասապրոցեսի մեջ, երեխան ավելի կենտրոնացած մասնակցի դասին, դասերը պլանավորվեն համակարգչային շատ լայն հնարավորությունների հիման վրա: Դասերի մեծ մասն անցավ դիդակտիկ նյութերով հագեցած՝ սահիկահանդեսներով, օնլայն դիդակտիկ խաղերով, յութուբյան հոլովակների մեջբերմամբ: Ծնողները սկսեցին սովորել աշակերտի հետ միասին՝ ինչպես օգտվել այս կամ այն համակարգից-ծրագրից: Ծնողներն ավելի հետևողական դարձան:

Լայն հնարավորություն ստեղծվեց նաև ուսուցիչների վերապատրաստման համար, որովհետև կազմակերպվեցին առցանց անվճար դասընթացներ ուսուցիչների համար: Շնորհակալություն Ռուզաննա Ստեփանյանին, ում տրամադրած հոլովակներն անընդհատ օգնում են ուսուցիչներիս՝ դասն առավել արդյունավետ և օգտակար դարձնելու, ՀՊՄՀ դասախոս Քնարիկ Հովհաննիսյանին և ՀՊՄՀ հիմնական դպրոցի դասվար, մեթոդիստ, միջազգային կարգի վերապատրաստող Կարինե Չիբուխչյանին՝ իմ ղեկավարած դասարանում առանձնահատուկ ու շատ հետաքրքիր դաս վարելու համար, որից ես նույպես նոր գիտելիքներ ու մեթոդներ քաղեցի:

Օնլայն դասի վնասակարությունը

Պետք է ընդգծել, որ երեխաները ենթարկվում են համակարգչի գունային ազդեցությանը, ուսուցիչը լարվում է, որ կարողանա հասցնել դասը երեխաների կողմից լիարժեք ընկալման, բայց այս պարագայում այն լիարժեք չի կատարվում, որովհետև նա չի կարողանում «շոշափել» աշակերտին՝ հենվելով նրա հուզազգացական վիճակի վրա:

Միջին դպրոցի աշակերտների շրջանում խնդիրներն ավելի շատ են, որովհետև դասի ընթացքում անջատում են էկրանները՝ մեկնաբանելով, որ կապը լավը չէ և զբաղվում են կողմնակի բաներով՝ չկենտրոնանալով դասին: Նրանց անվտանգությունն ապահովված չէ, որովհետև ուսուցիչն ի վիճակի չէ վերահսկել աշակերտի ֆիզիկական ներկայությունը դասին՝ չիմանալով թե զուգահեռ ինչով է զբաղված աշակերտը: Օրվա կտրվածքով աշակերտի զբաղվածությունը մեծ է՝ թե՛ դասը պատրաստելիս, թե՛ դասին մասնակցելիս, երեխաները ժամեր շարունակ նստած են մնում նույն դիրքով՝ գամված համակարգչի կամ վատ երևացող հեռախոսների էկրաններին, որոնք կարող են առաջացնել տեսողական խնդիրներ: Նյարդային վիճակ է ստեղծվում նաև դասին մասնացելու հայտին միանալու ժամանակ, քանի որ հայաստանյան ոչ մի օպերատորի մատուցած կապը լավը չէ այս գերլարված պայմաններում, երբ բոլորը առցանց կապի մեջ են:

Ընտանիքներ կան, որոնք ինտերնետ կապի հնարավորություն չունեն տանը, և երեխան դասին մասնակցում է նախապես լիցքավորված հեռախոսով, որի համար պահանջվում է որոշակի գումար. արդյունքում միջին ապրող ընտանիքը մի քանի երեխա ունենալու դեպքում սպառում է բոլոր միջոցները: Մեծ ընտանիքներում դասի ժամանակ խնդիրներ են առաջանում, որովհետև փոքր բնակարաններում այն ուղղակի հնարավոր չէ առանձին կազմակերպել, որի արդյունքում երեխան չի կարողանում լիարժեք մասնակցել դասին:

Խնդիրները բազմաթիվ են, քանի որ մանկավարժությունը մշտապես հենված է եղել և պետք է հենված լինի կենդանի շփման վրա: Ուսուցիչը պետք է կարողանա ոչ միայն դասավանդել, այլև ազդել երեխայի վրա՝ նրա համար լինելով օրինակ իր ամբողջական կերպարով: Առցանց ուսման դեպքում վերանում է *միջավայր* հասկացությունը, որն իր մեջ ընդգրկում էր՝ դասի ընթացքում խմբային աշխատանքները, միջանձնային հարաբերությունները, առողջ ապրելակերպը:

Այսպիսով կարելի է փաստել, որ առցանց ուսուցումը լավ է, երբ այն զուգորդվում է առկա ուսուցման հետ, այսինքն՝ մեկ օր կարելի է կազմակերպել որևէ ֆիլմի, մուլտֆիլմի դիտում ու քննարկում կամ սահիկահանդեսի ցուցադրություն, բայց երբեք այն չդարձնելով ուսուցման հիմնական ձև: Ինչ արած, այսօր մենք և ամբողջ աշխարհը հայտնվել ենք համավարակի պարտադրած միջավայրում և հարկադրված ենք դասերը կազմակերպել հեռավար: Իսկ ստեղծված իրավիճակը հաղթահարելուց հետո պետք է հասկանանք, որ դպրոցները պետք է զինել համապատասխան տեխնիկայով՝ համակարգիչներ, պրոյեկտորներ, էլեկտրոնային գրատախտակներ, որ աշակերտը գունավոր դաշտից միանգամից չտեղափոխվի դեպի անգույնը՝ խուսափելու համար հակասությունից:

Լիլիթ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Դիլիջանի N 4 հիմնական դպրոց

Բաց դաս՝ նվիրված Հաղթանակի օրվան

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 75-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցը, գիտակցելով հերոսական սերնդի սխրանքների դերն ու նշանակությունը, ամեն տարի ավանդաբար անցկացնում է բաց դասեր՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվան՝ մայիսի 9-ին: Այս տարի այդ միջոցառումներն անցկացվեցին հեռավար՝ առցանց ձևաչափով:

Դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով թեմատիկ դպրոցական միջոցառումներին տարբեր տարիների մասնակցել են այնպիսի վաստակաշատ գործիչներ, ինչպիսիք են ՌԴ-ում ՀՀ դեսպանության դիվանագիտական ներկայացուցչությանը կից ռազմական կցորդ, գնդապետ Արմեն Լալայանը, Խորհրդային Միության հերոս, վաստակավոր փորձարկու օդաչու Գուրգեն Կարապետյանը, գեներալ-մայոր Ռոման Հարությունովը, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը, գեներալ-մայոր Միխայիլ Շահրամանյանը, էներգետիկայի և ֆինանսների ինստիտուտի էներգետիկայի դեպարտամենտի առաջատար վերլուծաբան Իվան Բաղրամյանը (Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի թոռը), Արտյոմ Միկոյանի անվան փորձնական նախագծումների բյուրոյի ղեկավարի խորհրդական Հովհաննես Միկոյանը (Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, լեգենդար կործանիչ ինքնաթիռների ականավոր նախագծող Արտյոմ Միկոյանի որդին), Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության զինծառայողները և այլ հարգարժան հյուրեր:

Այս տարի դպրոցի սաները յուրովի էին պատրաստվել «Անմահ գնդի» ներկայացմանը: Նրանք պատրաստեցին Հայրենական մեծ պատերազմի 75-ամյակի հոբելյանը խորհրդանշող կրծքանշաններ՝ աստղ փակցված Գեորգիևյան ժապավենի վրա, ինչպես նաև ցուցապաստառների վրա ներկայացրին պատերազմում մասնակցած իրենց նախնիների նկարները՝ համեմված պատերազմում անցած սխրանքների պատմություններով և անցած ճանապարհով: Այդ ամենը արվեց առցանց ձևաչափով՝ օգտագործելով ժամանակից տարբեր տեխնոլոգիաները:

Արտյոմ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ. պարարվեստի մանկավարժության ավանդույթների կրողը

Արտյոմ Մանվելի Ռաֆայելյանը ծնվել է 1984 թվականին Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, պարարվեստի մանկավարժների ընտանիքում: Ավարտելով Հրազդանի Անանիա Շիրակացու անվան N 6 միջնակարգ դպրոցը՝ 2002 թվականին ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի բաժինը: Հայոց բանակում ծառայությունից հետո՝ 2004 -2008 թվականներին, իր մասնագիտության գծով շարունակել է ուսումը համալսարանի մագիստրատուրայում՝ գերազանց առաջադիմությամբ ավարտելով այն: Համալսարանում սովորելու տարիներին, ուսմանը զուգահեռ, բուհի ուսանողական խորհրդում նա ծավալել է հասարակական ակտիվ գործունեություն, եղել է ուսանողական խորհրդի փոխնախագահ, մշակութային միջոցառումների կազմակերպիչ-պատասխանատու:

Հավելենք, որ Արտյոմը դեռևս 5 տարեկան հասակից պարել է իր ծնողների կողմից հիմնադրված՝ Մանվել և Ժասմենա Ռաֆայելյանների «Նինահար» պարային համույթում, որն ունի 35 տարվա պատմություն և մինչև այսօր գործում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:

2008-2009 թթ.-ին Արտյոմ Ռաֆայելյանը պարել է ՀՀ վաստակավոր կոլեկտիվ պարի պետական անսամբլում, ապա ՀՀ կինոյի և թատրոնի պետական համալսարանի պարարվեստի ռեժիսուրայի բաժնում ՀՀ ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանի հետ աշխատել որպես ասիստենտ:

2006 թ. Ռաֆայելյանների ընտանիքը «Նինահար» պարային համույթին կից հիմնադրել է «ՌԱՖԱՅԵԼՅԱՆՆԵՐ» պարային դպրոցը, իսկ 2011թ. հայր և որդի Ռաֆայելյաններն են հիմնադրել «Նինահար» մշակութային հասարակական կազմակերպությունը: Կազմակերպությունը գործունեություն է ծավալում ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս՝ մասնակցելով բազմաթիվ միջազգային մրցույթների և միջազգային փառատոնների՝ ներկայացնելով հայկական պարն ու երգ-երաժշտությունը:

Արտյոմն այսօր արդեն ունի 17 տարվա մանկավարժական փորձ և բարձր մասնագիտական որակավորում: Տարիների փորձառությամբ նա իրականացրել է շուրջ 250 պարերի հեղինակային բեմադրություններ՝ տարբեր տարիքային խմբերում: Հեղինակ է 300 պարողներ ընդգրկած մասսայական պարային ֆլեշ մոբերի:

«Նինահար» պարային համույթն ունի 2 պաշտոնական պարային տեսահոլովակ, որից առաջինը նկարահանվել է 2015 թվականին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում և Հաղարծին վանական համալիրում՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին, մյուս տեսահոլովակը՝ «Վերածնվածներս» վերնագրով, նկարահանվել է 2019 թ. Շուշիում, նվիրվել է Շուշիի ազատագրման 27- ամյակին:

Արտյոմի աշխատանքը պարային ասպարեզում բազմիցս է գնահատվել. 2014 թվականին ՀՀ մշակույթի նախարարի կողմից նա պարգևատրվել է բարձրագույն պարգևով `Գրիգոր Նարեկացու անվան հուշամեդալով: Արտյոմը 2010 թվականից Կատարողական արվեստի համաշխարհային ասոցացիայի (WAPA) անդամ է, 2019 թվականից Համաշխարհային պարարվեստի կոմիտեի (CID) անդամ, պարարվեստի միջազգային ժյուրի:

«Նինահար» պարախմբում աշխատելու և համատեղ պարելու տարիներին Արտյոմ Ռաֆայելյանը հյուրախաղերով հանդես է եկել նախկին Խորհրդային Հանրապետության մի շարք քաղաքներում՝ Մոսկվայում, Կիևում, Մինսկում, Արխանգելսկում, Չերոքսարիում, Ռոստովում, Վլադիկովկասում, Թբիլիսիում, Բաքումում և այլուր, իսկ 2002-ից սկսած պարային համույթով շրջագայել է Իտալիայում, Իսպանիայում, Հնդկաստանում, Չեխիայում, Սլովակիայում, Բուլղարիայում, Մակեդոնիայում, Թուրքիայում և այլուր:

Համույթում աշխատելու տարիներին նա ձեռք է բերել միջազգային և հանրապետական բազմակի մրցույթների դափնեկրի կոչումներ: Պարային կոլեկտիվը մասնակցել է հանրապետությունում կայացած գրեթե բոլոր մասսայական միջոցառումներին, որի համար համույթի ղեկավարները տարբեր մրցանակների են արժանացել:

2017 թվականից Ռուսաստանի հայերի միության և ՀՀ Սփյուռքի նախարարության աջակցությամբ «Նինահար» պարային համույթը հյուրախաղերով հանդես է գալիս Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում և մերձմոսկովյան քաղաքներում, ինչի համար ՌԴ Հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի կողմից արժանացել է Ոսկե հուշամեդալի:

2019 թվականին Արտյոմը Մոսկվայում հիմնադրել է «Հայրենիք» պարային խումբը, ուր հաճախում են 5 տարեկանից բարձր հայ երեխաներ, պատանիներ ու երիտասարդներ, որոնք հաղորդակցվում են հայ մշակույթին՝ պահպանելով ազգային-գաղափարական մտածողությունը:

Մեր համալսարանի շրջանավարտները մեր հպարտությունն են, մեր բուհի գործունեության ու առաջընթացի հայելին:

Ափ ենք հասնելու...

Անթիակ նավերով դուրս գալ մեծ օվկիանոս ու դափ-դատարկ ձեռքերով թիավարել. սա է ուսուցչի առաքելությունը հիմա:

Չարաղետ մի դիպված աշխարհը կանգնեցրեց մեծ անդունդի եզրին, և մարդիկ սկսեցին մտածել՝ ինչպես հաղթահարել անդունդը:

Մարտի դաշտ դուրս եկան բժիշկները:

Ամեն մեկն իր ոլորտում ձգտում է անել ամենը՝ մեկ միասնական պայքարով ընդհանուր թշնամուն հաղթահարելու նպատակին հասնելու համար:

Քաջ հայտնի առիթով բոլորս անցանք հեռավար ուսուցման: Վերջինիս համար ոչ այնքան պատրաստ կրթական բոլոր հաստատությունները թևակոխեցին նոր ու թռիչքային զարգացումների փուլ:

ՀՊՄՀ հեռակետային վարժարանը առաջիններից մեկն էր, որ իր բոլոր ուժերը ներդրեց նոր մարտահրավերը պատվով ընդունելու համար:

Ուսումնական պլանը հնարավոր բարձր արդյունավետությամբ իրականացնելու համար ամմիջապես անցանք առցանց հարթակ՝ օգտագործելով ձեռքի տակ եղած համացանցային գործիքները: Կարճ ժամանակ անց մանկավարժական համալսարանի ASPU հարթակը մեկ միասնական ուսումնական դաշտի հնարավորություն տվեց, և աշխատանքները շարունակվում են էլ ավելի կանոնակարգված ու որակյալ: Ուսուցիչները շատ արագ վերապալանավորեցին ուսումնական ծրագրերը և փորձեցին հարմարեցնել կրթական նոր ձևին:

Առանձին դասարաններ ստեղծեցին սոցցանցային խմբեր՝ արվեստի աշխատանքները և տանը մնալու ընթացքում հետաքրքիր նյութերի ծանոթանալու մասին հրապարակելու և հանրայնացնելու համար: Նախկինում ճանապարհի վրա ծախսվող ժամանակը փորձեցինք օգտագործել նպատակային. միասին նույն ժամին դիտել առցանց ներկայացումները, հայկական ֆիլմեր, լսել երաժշտություն, ծանոթանալ մեծ կոմպոզիտորների ու առհասարակ արվեստագետների կյանքին ու ստեղծագործություններին::

Հասկացանք՝ 45 րոպեն շատ էր նեղ մեզ համար: Վերագնահատեցինք ժամանակը: Հաղթահարելով չորս պատի մեջ մնալու հոգեկան անձուկը՝ բացը լրացնում ենք լրացուցիչ կրթությամբ:

Բարդ է, բայց ոչ անհնար: Մենք որոշեցինք՝ կիսով լցված բաժակի լիքը կողմը տեսնել այս ամենում:

Ուրեմն՝ բժիշկներից հետո մարտի դաշտ դուրս եկան ուսուցիչները:

Հպարտությամբ նշենք, որ ՀՊՄՀ հեռակետային վարժարանի ուսուցիչները և համալսարանի դասախոսները ստանձնեցին այս օրերին ՀՀ բոլոր աշակերտներին մասնագիտական օգնությամբ օժանդակելու գործը՝ մասնակցելով ԿՏԱԿ-ի կազմակերպած հեռավար դասընթացի նկարահանումներին:

Այսպիսով՝ անտեսելով բոլոր դժվարությունները՝ և՛ ուսուցիչ, և՛ աշակերտ կանխեցին կրթության շարունակականությանը սպառնացող բոլոր վտանգները:

Օր օրի ավելացվող նոր առաջադրանքները ճիշտ ժամկետներում կատարելով, կատարված աշխատանքի վերաբերյալ պարբերական վերլուծություններով ու հաշվետվություններով՝ մոտենում ենք ուստարվա ավարտին:

Վերահամոզվեցինք՝ ցանկացած պատերազմում մարտի դաշտում եթե կռիվ է տալիս մտավորականը՝ բժիշկն ու ուսուցիչը, ուրեմն՝ հաղթանակը, մեղմ ասած, անխուսափ է:

Մենք անթիակ նավով բաց օվկիանոս դուրս եկանք, մեր ափերը ամուր թիակներ սարքեցինք ու շատ էլ լավ լողում ենք. ափ ենք հասնելու:

Վանուհի ԲԱՂՐԱՄՅԱՆ

Նախագիծ

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ (ԱՌԿԱ) 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՁԱՓԵՐԻ

Դասիչը	Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության մրցութային քննությունները	Աստղանիշով (*) մրցութային առարկաները	Ուսման վարձը (հազար դրամ)
11. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան				
011201.00.6	Նախադպրոցական մանկավարժություն			
	011201.01.6 Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	**Հլգ(գ)**	Մ* կամ Օտլ*	480
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն			
	011301.03.6 Սոցիալական մանկավարժություն	**Հլգ(գ)**	Մ* կամ Օտլ*	390
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	**Հլգ(գ)**	Մ* կամ Օտլ*	580
011302.00.06	Հատուկ մանկավարժություն			
	011302.01.6 Սուրդոմանկավարժություն	**Հլգ(գ)**	Կ *	350
	011302.02.6 Տիֆլոմանկավարժություն	**Հլգ(գ)**	Կ *	350
	011302.03.6 Օլիգոֆրենոմանկավարժություն	**Հլգ(գ)**	Կ*	350
	011302.04.6 Լոգոպեդիա	**Հլգ(գ)**	Կ*	460
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն			
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	**Հլգ(գ)**		390
	011401.04.6 Ֆիզիկա	**Ֆ(գ) կամ Մ(գ)**	Մ* կամ Ֆ*	360
	011401.12.6 Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	**Հլգ(գ)**	Մ*	360
	011401.05.6 Մաթեմատիկա	**Մ(գ) կամ Ֆ (գ)**	Ֆ* կամ Մ*	360
	011401.06.6 Ինֆորմատիկա	**Մ (գ) կամ Ֆ(գ)**	Ֆ* կամ Մ*	430
	011401.02.6 Քիմիա	**Ք (գ)**	Մ* կամ Ֆ*	360
	011401.01.6 Կենսաբանություն	**Կ (գ)**	Ք* կամ Ֆ*	390
	011401.03.6 Աշխարհագրություն	**Ա (գ)**	Մ*	390
	011401.18.6 Պատմություն	**ՀՊ (գ)**	ԸՊ* կամ Օտլ*	410
	011401.11.6 Կերպարվեստ**	**Գծն**		520
	011401.13.6 Երաժշտական կրթություն**	**ԵՏՍ (բ)**		490
	011401.14.6 Պարարվեստ**	**Դպար**		650
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	**Անգլ (գ)**		460
	011401.22.6 Գերմաներեն լեզու և գրականություն	**Գլ(գ)**		410
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	**Ռլգ(գ)**		350
	011401.08.6 Հասարակագիտություն	**ՀՊ (գ)**	ԸՊ* կամ Օտլ*	410
	011401.15.6 Շախմատ	**Հլգ(գ) կամ Մ(գ)**	Մ* կամ Հլգ*	350
021101.00.6	Տեսալսողական արվեստ**			
	021101.01.6 Գեղարվեստական լուսանկարչություն	**ԳԼՀ**		520
	021101.02.6 Օպերատորություն	**ՕՊՀ**		520
021201.00.6	Դիզայն**			
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	**Գծն**		530
021401.00.6	Կիրառական արվեստ**			
	021401.01.6 Դեկորատիվ կիրառական արվեստ	**Գծն**		530
021502.00.6	Կատարողական արվեստ**			
	021502.01.6 Գործիքային կատարողականություն	**ՄԳԴ (բ)**		490
021503.00.6	Թատերական արվեստ**			
	021503.02.6 Ռեժիսուրա	**Դվ**		510
021801.00.6	Արվեստի տեսություն և պատմություն**			
	021801.01.6 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում	**ԸՊ (բ)**		390
023102.00.6	Օտար լեզու և գրականություն			
	023102.05.6 Իսպաներեն լեզու և գրականություն	**Օտլ(գ)**		460
031301.00.6	Հոգեբանություն			
	031301.01.6 Հոգեբանություն	**Հլգ(գ)**	Օտլ* կամ Կ*	480
031401.00.6	Սոցիոլոգիա			
	031401.01.6 Սոցիոլոգիա	**Հլգ(գ)**	Օտլ* կամ Մ*	410
031501.00.6	Մշակութաբանություն			
	031501.01.6 Մշակութաբանություն	**Հլգ(գ)**	ՀՊ* կամ ԸՊ*	390
	031501.02.6 Թանգարանային գործ և պատմամշակութային կառույցների պահպանություն	**Հլգ(գ)**	Օտլ* կամ ՀՊ*	360
032101.00.6	Լրագրություն			
	032101.01.6 Լրագրություն	**Հլգ(գ)**		410
032201.00.6	Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ			
	032201.01.6 Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ	**Հլգ(գ)**	Օտլ* կամ ՀՊ*	360
052101.00.6	Շրջակա միջավայրի գիտություններ			
	052101.01.6 Շրջակա միջավայրի գիտություններ	**Ք (գ) կամ Կ(գ)**	Ֆ*	390
041301.00.6	Կառավարում**			
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	**ՍՄԳԿ(գ, բ)**		520
092301.00.6	Սոցիալական աշխատանք			
	092301.01.6 Սոցիալական աշխատանք	**Հլգ(գ)**	Օտլ* կամ Կ*	410

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

(բ)	Բանավոր
(գ)	Գրավոր
(թ)	Թելադրություն
(տ)	Բուհի կողմից սահմանված թեստ
Հարց	Հարցազրույց
Ա	Աշխարհագրություն
ԱԿ	Արվեստի կառավարում
Անգլ	Անգլերեն լեզու
ԱՏ	Արվեստի տեսություն
ԲՊ	Բալետի պատմություն
ԲԽ	Բեմական խոսք
ԲՀՄ	Բանավոր հաղորդակցման մշակույթ
Գլ	Գերմաներեն լեզու
Գծն	Գծանկար
Գծ	Գծագրություն
ԳԼՀ	Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ
Դպար	Դասական պար
Դվ	Դերասանի վարպետություն
ԵՏՍ	Երաժշտության տեսություն և սոլֆեջիո
ԵՏՏ	Երաժշտական տարրական տեսություն
ԸԱՊ	Ընդհանուր արվեստի պատմություն
ԸՊ	Ընդհանուր պատմություն
ԸՖՊ	Ընդհանուր ֆիզիկական պատրաստականություն
Իտ	Իտալերեն լեզու
Իս	Իսպաներեն լեզու
ԼԿՀ	Լուսանկարչության հիմունքներ
ԾԿ	Ծրագրի կատարում
ԿՏ	Կերպարվեստի տեսություն
Կոմպ	Կոմպոզիցիա
Կ	Կենսաբանություն
Կոլ	Կոլոքվիում
ԿՊՏ	Կերպարվեստի պատմություն և տեսություն
ԿՊ	Կերպարվեստի պատմություն
Հլգ	Հայոց լեզու և գրականություն
ՀՊ	Հայոց պատմություն
Մ	Մաթեմատիկա
ՄՊ	Մշակույթի պատմություն
ՄՀ	Մասնագիտական հարցազրույց
Մասն	Մասնագիտություն
ՄԳԴ	Մասնագիտական գործիք և դիրիժորություն
ՆԵՍԿ	Նվագարաններով երաժշտական ստեղծագործության կատարում
Նկ	Նկարչություն
Ռլգ	Ռուսաց լեզու և գրականություն
Ռլ	Ռուսաց լեզու
Ռեժ	Ռեժիսուրա
ՍԵՏ	Սոլֆեջիո և երաժշտության տեսություն
ՍՄԳԿ	Սոցիալ-մշակութային գործունեության կազմակերպում
ՍԾ	Ստեղծագործական շարադրություն
ՍԱ	Ստեղծագործական աշխատանք
Սմ	Ստեղծագործական մրցույթ
Ք	Քիմիա
Օտլ	Օտար լեզու (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն)
ՕՊՀ	Օպերատորության հիմունքներ
Ֆ	Ֆիզիկա
Ֆրլ	Ֆրանսերեն լեզու

աստղանիշով (*) մրցութային առարկաները – մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի աղյուսակների երրորդ սյունակում նշված տվյալ մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննության հավասար միավորների դեպքում առավելությունը կտրվի աստղանիշով (*) մեկ առարկայի դեպքում ավարտական փաստաթղթում առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին, իսկ աստղանիշով (*) մեկից ավելի առարկաների դեպքում՝ այդ առարկաների գնահատականների առավել բարձր միջին թվաբանական միավոր ունեցող դիմորդներին.

** Մասնագիտություններ (կրթական ծրագրեր), որոնց համար սահմանված են ներբուհական քննություններ.

*** Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն.

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 15.05. 2020 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ